

Տարեկան գինը 10 բուլի, կես տարվանը 6 բուլի.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունուում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.



ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ֆրանսիան և Թուրքիան.—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ, Քաղաքային ձայնաւորների ընտրութիւ-
նը. Տղեկ երևոյթներ. Նամակ Պետերբուրգից.
Նամակ Կերբելից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ
Շվեդիայից. Նամակ Պարսկաստանից.—ԽԱՆԻ
ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՈՍ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Պատրիարքա-
րանի շուրջը.

ՖՐԱՆՍԻԱՆ ԵՒ ԹԻՒՐԿԻԱՆ

Եւրոպական մամուլը վերջերս մի քանի
մերձադուրներ արաւ այն տարածաշրջան-
ութիւնների վերաբերմամբ, որոնք ծագել են
Ֆրանսիական կառավարութեան և սուլ-
թանի մէջ հեղինակային հպատակների
պաշտպանութեան խնդրի առիթով: Մի
քանի շաբաթ առաջ մինչև անգամ հեռա-
զինը լուր բերեց, թէ զիւլումառիական
յարաբերութիւնները ընդհատուում են այդ
երկու պետութիւնների մէջ և Կ. Պօլսի
Ֆրանսիական դեսպան կամրոն պատրաստ-
վում է մեկնել Կ. Պօլսից:

Այդ առիթով ֆրանսիական «Sémapho-
re» լրագիրը հետեւեալ հետաքրքրական
տեղեկութիւններն է հաղորդում:

«Այլ ևս անօրուտ է թաղցնել որ Ֆր-
անսիան մի կատարեալ զիւլումառիական
Ֆրանսիո կրեց հեղինակային հպատակների
պաշտպանութեան խնդրում, մի Ֆրանսիո,
որ մեծ հարուած կը հասցնի նրա համ-
բախտ Արևելքում: Պ. կամրոն արաւ ինչ
որ կարող էր ֆրանսիական ազդեցութիւնը
անխախտ պահելու համար. նա խորխուր և
հաստատ ձայնով խօսեց զոռոգացած թիւր-
քերի հետ, բայց նրան չը պաշտպանեցին
Պարիզում և Կ. Հանուսո, որի ձախորդու-
թիւնները նա աշխատում էր ուղղել նա-
հանջեց Նիդրլանդի սպառնալիքների առաջ:
Ուրեմն թէ սկզբունքով թէ իրօք, Կ. Հա-
նուսո անձնատուր եղաւ թիւրքերին:

Հիմնվելով 1828 և 1829 թւերի դաշնա-
դրների վրա, Ֆրանսիան պահանջում էր
հեղինակային հպատակների պաշտպանութիւնը
նոյն իրաւունքով, ինչպէս կարող էին այդ
անել և Անգլիան ու Ռուսաստանը Լճուզնի

դաշնագրի հիման վրա. կամրոնի պահան-
ջը պաշտպանում էր և սըր Ֆիլիպ Կեր-
րի, բայց Հանուսո, որին Պարիզի թիւր-
քաց դեսպան Միւնիք-բէյ հասկացնել էր
տուել, որ եթէ կամրոն պիտի իր առա-
ջարկի վրա, այն է՝ յոյներին ֆրանսիական
հովանաւորութեան տակ ընդունելու առա-
ջարկի վրա, սուլթանը ստիպված կը լինի
պահանջել, որ նա յետ կանչվի կամ կը վե-
րադարձնի նրան իր անցադիրները.—Կ. Հանու-
սո, դարհուրած, հրաման ուղարկեց կամ-
րոնին դադարեցնել որ և է բանակցութիւն»:

Երկու-երեք տարի առաջ սուլթանի
մարտն անգամ չէր կարող անցնել յանդը-
նել այդ տեսակ համարձակ լեզուով խօսել
Ֆրանսիայի հետ, բայց եւրոպական կոն-
ցրտի և Հանուսոի բռնած ուղղութիւնը
ուրիշ հետեւանք չէր կարող արտադրել:
Սուլթանը, չը բաւականաւորով այդ սպառ-
նալիքով, աւելի առաջ դիտեց. «Արդ,—չա-
րունակում է լրագիրը—Ֆրանսիական կա-
ռավարութիւնը արդէն մի քանի հազար
պաշտպանողական վկայագրեր էր տուել
յոյներին: Այն րօպէից, որ յոյները յան-
ձնվեցին թիւրքերի բարի կամքին, այդ
վկայագրերը այլ ևս ոչ մի նշանակութիւն
չունենին. ինքն ֆրանսիական կառավարու-
թիւնը ուրանում էր իր ստորագրութիւնը:
Եւ ահա ինչ պատահեց. Ֆրանսիական
հիւպատոսարանում արձանագրված հեղին-
ակները, ունենալով իրանց ձեռքում ֆրան-
սիական հովանաւորութեան պաշտանական
վկայագրեր, ձեռքալայում էին և զգուշ-
բանոր ստորագրութեան ձեռքով, իսկ խա-
նութիւնը փակում էին եւ էր նրանք
յայտնում էին, որ գտնվում են Ֆրանսիա-
յի հովանաւորութեան տակ, երբ նրանք
ցոյց էին տալիս հանրապետութեան կնքով
դրոշմված վկայագրեր, որը դուռն էր նա-
հանջեց Ֆրանսիայի հովանաւորութեան տակ,
թիւրք ուսուցիկները և ժանդարմները ծի-
ծաղում էին նրանց վրա և պատաս-պա-
տառ էին անում այդ վկայագրերը: Ի հար-
կէ, Կ. Հանուսո չէր մտածել այդ կէտի
մասին, երբ մերժեց պաշտպանել Կ. կամ-
րոնի առաջարկը»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՉԱՅՆԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

1897—1901 քառամեակի ձայնաւորների ըն-
տրութիւնը տեղի ունեցաւ մայիսի 17-ին Թիֆլի-
սի ժողովարանի ամարային յիւնութեան մէջ:
Առաւօտեան ժամը 8-ից արդէն ընտրուեցին
հաւաքվում էին: Թիֆլիսի ազգայնակութեան
բոլոր խաւերի ներկայացուցիչներին այդ օրը
կարելի էր տեսնել,—հասարակ ժողովրդի մար-
դիկ, վաճառականներ, մաշականներ, ինտելի-
գենցիայի և դրամի ներկայացուցիչներ, պետա-
կան ծառայողներ: Չեւքից ձեռք էին անցնում
տղած ցուցակները, որոնք, տարբարաբար,
ինչպէս յետոյ փաստը ցոյց տուեց, շատ քիչ
ազդեցութիւն էին արել ընտրողների ահագին
մեծամասնութեան վրա, որովհետեւ քուէարկու-
նները բոլորովին չէին ղեկավարվել այս և այն
ցուցակով, այլ բոլորովին այլ տեսակետներով,
որոնց մէջ, ցաւելով պէտք է ասենք, բաւական
մեծ դեր էր կատարել ազգայնական տեսակե-
տքը... Օրինակ, մի քանի անձինք, որոնք կային
միաժամանակ մի քանի ցուցակներում, սեպտեմ-
կամ հազիւ անցան, իսկ մի քանիսները, որոնք
ոչ մի ցուցակում չը կային՝ ընտրվեցին բաւա-
կան ձայներով. վերջապէս միմիայն մի ցուցակի
մէջ մտցրած անձանց մի մասը անցաւ, միւս
մասը սեպտեմ: Այդպիսով ոչ մի կուսակցութիւն
ամբողջապէս յաղթող չը դուրս եկաւ, այլ ան-
ցան զանազան թեկնածուներ այս այն խմբերի
կողմից:

Մօտ ժամը 9-ին քաղաքագլխի պաշտօնակա-
տարը յայտարարեց նիստը բացված, և սուլթա-
կան ձեւակառութիւնները կատարելուց յետոյ,
սկսվեց քուէարկութիւնը. քուէարկվեցին 180
նոյի. ընտրողները թիւը ժողովարանի 1060
էր: Քուէարկութիւնը սկսվեց ժամը 10-ին և
վերջացաւ ժամը 5-ին: Երեկոյեան ժամը մօտ
6-ին սկսվեց քուէների համարելը, որ տեղե-
մինչև զրեւրվայ ժամը 1-ը: Չայների առաւելու-
թեամբ՝ ձայնաւոր ընտրվեցին հետեւեալ անձինք.
Ավթանյից, Մ. Գ. 616 սպիտակ 438 սև
Ալիխանով, Ի. Մ. 561 > 497 >

Ալիխանով, Ի. Մ.	629	>	425	>
Ալիխանով, Կ. Մ.	662	>	397	>
Անանով, Ս. Ի.	571	>	482	>
Արզումանյի-Պօլզօրու- կով, Ի. Մ.	745	>	311	>
Արզումանյի-Պօլզօրու- կով, Ի. Մ. Ն. Վ.	745	>	309	>
Արզումանյի-Պօլզօրու- կով, Ի. Մ. Ն. Ե.	633	>	425	>
Արզումանյի-Պօլզօրու- կով, Ի. Մ. Պ. Մ.	671	>	389	>
Բեբուժով, Ի. Մ. Ս. Ի.	649	>	411	>
Բելիշևի, Լ. Պ.	564	>	496	>
Բուրմազա, Լ. Ֆ.	688	>	368	>
Բուսիկի, Կ. Յ.	605	>	455	>
Վեպեղ, Փ. Կ.	606	>	454	>
Վերմիշով, Խ. Ա.	636	>	430	>
Գրուզինսկի, Ի. Մ. Ս.	643	>	416	>
Գրուզինսկի, Ի. Մ. Պ. Ա.	638	>	423	>
Չամբակուրիան- Օրբե- լիանի, Ի. Մ. Գ. Ի.	554	>	508	>
Չամբակուրիան - Օրբե- լիանի, Ի. Մ. Ի. Մ.	573	>	488	>
Դօրախանով, Մ. Ի.	608	>	452	>
Եւանգուլով, Գ. Գ.	635	>	426	>
Խանկեյի, Ս. Ա.	613	>	446	>
Խրիզուխով, Ա. Գ.	681	>	382	>
Յովհաննիսեան, Ա. Ա.	605	>	457	>
Քալանթար, Ա. Հ.	585	>	478	>
Կարապետով, Ն. Ի.	532	>	528	>
Ղիփիանի, Վ. Բ.	557	>	511	>
Կորչանով, Վ. Գ.	540	>	524	>
Կորչանով, Գ. Գ.	594	>	467	>
Կորչանով, Ի. Ս.	580	>	481	>
Քալանթար, Գ. Ա.	536	>	532	>
Լուկեւիչի, Մ. Վ.	625	>	439	>
Մալինին, Ե. Ս.	703	>	354	>
Մալինով, Լ. Ե. Ս.	616	>	443	>
Մեղիկով, Ի. Մ. Գ. Գ.	589	>	470	>
Մեղիկով, Ի. Գ.	532	>	530	>
Մելիք-Բեկչեարով, Ի. Ա.	556	>	506	>
Օպօնիսին, Պ. Ա.	692	>	368	>
Օտթօզօրսկի, Ն. Ն.	552	>	513	>
Փրիզով, Ա. Ֆ.	672	>	387	>

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ա Ր Ա Ն Ի Ծ Ո Ւ Ր Ջ Ը

Կ. Պ Օ Ր Ի Ս, մայիսի 3-ին

Ճամանակն եկած հասած է կարծեմը յայտնե-
լու համար մեր պատրիարքարանի բռնած ըն-
թացն՝ հանդէպ իրաց ներկայ վիճակին՝ որոյ
զլխաւոր դերակատարն է նոյն ինքն Օրմանեան
պատրիարք: Բայց բացատրութեան մասնիչ ա-
ռաջ պէտք է քիչ մը նորին սրբազնութեան ան-
ցեղաւ պարզել:

Օրմանեան՝ երջանկալիչապակ Ներսէս Վարժա-
պետեանի պատրիարքութեան ժամանակ՝ 1879-ին՝
պապականութեան դարձաւ Հայաստանեայց եկե-
ղեցոյ ժողովի մէջ քանի ընկերներուն: Ինքը
պապական ծնած, պապական սնած և պապա-
կան մեծցած էր, պապական էր կոչուել, պա-
պական նաև սիրան ու հօգին, ուստի չեմք կա-
րող ըսել թէ համոզմամբ կամ ներքին դիտակ-
ցութեամբ էր որ մղուեցաւ զէպի հայ եկեղե-
ցին՝ այլ՝ Հատուցիտ և անտի—Հատուցիտ կըր-
կին կուսակցութիւններն՝ որ այն ժամանակ-
ներն երկուստեք բարբառած էին՝ և որոյ մէ-
կին կը պատկանէր նաև Օրմանեան, թեւադրե-
ցին զինքն որ հայ եկեղեցոյ մէջ գտնէ իր
փրկութիւնն: Այս յայտնի էր որ՝ եթէ այն ա-

տեն այդպէս չը վարուէր՝ վտանգը մեծ պիտի
լինէր իրեն համար:

Օրմանեանի քաղաք բանեցաւ, նա հանդիպե-
լու Վարժապետեանի պէս խիտ ազատամիտ
պատրիարքի մը, որ անխառնութիւն կը քարոզէր և
որոյ առջև նշանակութիւն իսկ չունէին պապա-
կան կամ բողոքական և այլն յարաւու աւան-
կան բառերը, բաւական էր հայ մը տեսնել
որ հայ սիրտ, հայ հոգի, հայ միտք և հայ պա-
ցում ունենար, այնպիսայն կրօնը, դուստու-
թիւնն ինչ ալ լինէր՝ երբէք բանի տեղ չէր
գնել՝ մասնաւոր թէ՛ Օրմանեան երիտասարդ
վարժապետ մ'էր, գրադէտ ու լեզուաբէտ՝ որ
կարող էր ծառայել Վարժապետեանի բուն
նպատակին. ուստի Օրմանեան ճարտիւղու-
թեամբ յաջողեցաւ Վարժապետեանի անդաման
ազատամտութեան օգտուել, գրաւեց նորա սիր-
տուն և գրեթէ մէկ տարին, ճիշդ 1880-ի ըս-
կիզներն՝ Հայաստանի բարձրագոյն մէկ թե-
մին՝ Էջմուցի՝ առաջնորդ հաստատուեցաւ իր
կատարեալ անխորձութեամբ՝ յետ Յարութիւն
Վեհապետեանի՝ (այժմ պատրիարք Երուսաղէմի):

Էջմուցից՝ Վարժապետեանի պէս ժողովր-
դական և հայրենասէր պատրիարքի մը կողմանէ
զրկուած այս վարժապետն՝ իրեն հրեշտակ Աս-
տուծոյ ընդունեցին, և իրաւունք ալ ունէին՝
զի գաւառին մէջ տիրող առաջնորդական կուր-
ններն սնդեան զուգուցեցր էին զիրենք՝ որ նոր
մարդու մը, հայրենասէր առաջնորդի մը, և
ուսուցան և իմաստուն եկեղեցականի մը պէտքն

զգալի եղած էր իրենց և Օրմանեան՝ յանձին
ցոյց կուտար այդ ամենը: Խիտ հարտար էր
նա՝ պապական սրբապաշտոյ ծաղկանոցէն
ծրած՝ արեւածաղիկ նման կարող էր իր երեսն
արեւուն գտնուած կողմը դարձունել՝ հետեւաբար
կատարեալ ժողովրդական առաջնորդ մ'եղաւ.

անչաճասիրութիւն ցոյց տալով՝ առաջնորդական
հասոյթները վերջացուց. հայրենասիրութիւն
կեղծելով մինչև իսկ Վարժապետի ամեն օրը՝
պատարագի ժամանակ՝ սրբապաշտութեան տեղ
«անոյ՜ Վարդան, կարմիր Վարդան, հոգիս հո-
գուդ եղնի դուրպան» երգը երգել առաւ. և
անհոգուն և իմաստուն գործունէութեամբ մը որ
սակել ձեւական էր, քան իրական՝ տեղույն ազ-
գային վարժարաններու միջնորդման խնդիր մը
հանեց և ինքն ստանձնեց ընդհանուր տեսչու-
թեան պաշտօնը՝ զոր քիչ ժամանակ յետոյ թո-
ղելով իրեն պէս պապական և սակայն հայկա-
կան եկեղեցին ընդունող Տուրքուսեան անուն
վարժապետ մը Էջմուցի բերել առաւ, ամուս-
նացուց զայն և իր տեղ՝ բոլոր զարոյցներու
վրա ընդհանուր տեսչու անուանեց: Աղջկանց
վարժարաններու վարժուհիներն՝ որք տեղացի
էին՝ իրենց պաշտօններէն զազդեցնելով՝ իր
ձանցած վաժուհիներէն (կըսուէր թէ պապա-
կան էին) երկու երեք համեմատաւոր և քիչ
Պօլսէն բերել առաւ. և այդպէս վարժարան-
ներու մասնաւոր խնամքը՝ ազգասիրաբար ինքն
ստանձնեց (պէտք է ասքէ անցնել ժամանակի
Պօլսոյ թերթներուն մէջ Էջմուցի և Երզնկային

այս մասին եղած թղթակցութիւնները):

Բարեբախտաբար այն ժամանակներն Օրմա-
նեանի համար ուրիշ ասպարէզ մ'ալ բացուած
էր: Մասնաւորապէս բարեբարձի իր համանուն
վարժարանը կը բանար Էջմուցի մէջ՝ բայց
վարժարանին յարմարութիւն չէր չը կար, ուստի
Օրմանեան՝ Մասնաւորանի տրամադրութեան
ներքեւ դրաւ անմիջապէս իր առաջնորդարանն և
այդ շնորհիւ արժանացաւ փաստաւոր վարչախ
մուշտակի և հարկւր օսմանեան լիբայի (1000
բուլի). ինչպէս անչաճասիրաբար՝ առաջնորդա-
կան հասոյթները վերջացուցած լինելուն հա-
մար արժանացած էր 25 օսմանեան ուղւոյ
(250 բուլի) ամաթոշակի, զոր անընդհատ ամեն
ամիս կը վճարէր իրեն տեղույն թաղական խոր-
հրդոյ անուակն:

Անուն էր Օրմանեանի սէրը Մասնաւորան
վարժարանի՝ և նորա բարեբարձ աղա Մկրտիչի
և սորա երեք պատուական սաներուն՝ Մա-
ղաթեան, Մոլիկեան և Արուսեանի—վրա և լիա-
նատ կը վարձարուէր անոնցմէ, ուստի արժան
էր որ վարձուց փոխանակութեան իրաւունքն
յարդուէր, պէտք էր որ Օրմանեան ալ անուա-
նալի յիշատակ մը թողար նոցա և այդ բանին
մէջ ալ յաջողեցաւ.—Էջմուցի աղջկանց հոյա-
չէն մէկ վարժարանն իսպառ և անվերջանալի
կերպով Մասնաւորաններու յանձնեց՝ աւերե-
ւոյթն հարկւր օսմանեան ուղի տարեկան վարձ-
քով և իր օրովն հաստատ դաշնագրութեան և
պատրիարքարանի վաւերացման կնիքակցով

Փրիզոնով, Ն. Ս.	610	>	453
Բէյտեր, Կ. Ն.	871	>	191
Թախրով, Ի. Ա.	564	>	491
Թամաշևի, Մ. Ի.	711	>	350
Տիգրանով, Լ. Ֆ.	537	>	521
Թումանով, Իշխ. Գ. Մ.	670	>	387
Ուսուկով, Ի. Գ.	601	>	457
Խուզարով, Ն. Ա.	608	>	451
Ծովիանով, Ի. Ի.	649	>	411
Յուրիանով, Ա. Ս.	567	>	492
Չուրկանով, Իշխ. Ա. Զ.	589	>	475
Շահ-Աղիզով-Կամարա- կան, Ա. Իս.	729	>	335
Շահ-Պարոնեանց, Մ. Ս.	621	>	439
Շիմկելիչ, Ա. Պ.	555	>	505
Էնֆիաճեանց, Տ. Ա.	638	>	420
Եակիմով, Պ. Մ.	586	>	519
Եարայով, Գ. Զ.	589	>	469

Միւս քուէարկողները թուով 123 հոգի, չանցան. դրանք էին՝ Աբելով Վ. Գ. (431 սպ. 621 սև), Ակոպով Ե. Մ. (523 սպ. 536 սև), Ալիբեկով Պ. Ի. (504 սպ. 551 սև), Անդրոնիկով Ի. Իս. (437 սպ. 616 սև), Անդրոնիկով Իշխ. Ն. Գ. (520 սպ. 539 սև), Ալիեանց Լ. Ս. (420 սպ. 639 սև), Ախունով Րաշիբ-բեկ (381 սպ. 672 սև), Ալապիեկ Ն. Ֆ. (456 սպ. 602 սև), Բարբով Ա. Ս. (530 սպ. 530 սև), Բարբով Ե. Ս. (514 սպ. 541 սև), Բարխուդարեանց Ա. Պ. (458 սպ. 601 սև), Բուզանով-Բաղ-դասարով Ա. Ս. (421—638), Բարբով Իշխ. Ի. Գ. (431—630), Բարբով Իշխ. Գ. Զ. (436—619), Բուզանով Ի. Ս. (478—577), Բեժանբեկով Պ. Պ. (310—749), Բոզդանով Ֆ. Ի. (338—721), Բարնով Ի. Վ. (344—708), Վարձեկով Կ. Ս. (351—708), Վարձեկով Ա. Ի. (520—543), Վարձեկով Գ. Մ. (369—689), Վարձեկով Ա. Ս. (377—691), Վասիլիեկ Պ. Ս. (435—626), Վաղանգ Ս. Ի. (467—603), Վեռնիկովորով Բ. Ս. (476—585), Վեռնիկովորով Մ. Ն. (484—575), Վալախով Իշխ. Ս. Բ. (399—662), Գաբանով Վ. Գ. (436—626), Գաբանով Վ. Ի. (399—664), Գվատուա Գ. Կ. (406—649), Գրաբովսկի Վ. Վ. (419—638), Գրիկովորով Ն. Ա. (484—580), Գրիկով Ն. Ա. (498—564), Գուրգենբեկով Ի. Օ. (472—591), Գանիկով Ե. Մ. (496—576), Զանչիեկ Ա. Ա. (457—600), Գոլիսկի Ի. Ս. Կ. (396—667), Եւստուրով Ա. Բ. (518—544), Եղիազարով Վ. Ս. (436—620), Զուբարով Ա. Զ. (317—746), Եղիազարով Նազիր-բեկ (360—601), Կալիբեկ Կ. Ի. (365—699), Կալաշնիկով Ե. Մ. (366—694), Կանդուբարով Պ. Գ. (430—630), Կանդուբարով Վ. Գ. (461—609), Գեթիսով Գ. Ս. (480—578), Գլիկիանի Մ. Կ. (448—615), Կոլուբանսկի Գ. Մ. (465—597), Կոնդրատենիկ Ֆ. Ի. (443—621), Կոստենսկի Ի. Ի. (390—678), Կուսիկով Ն. Ս. (467—602), Գարթովիկով Ի. Մ. (406—657), Լավրով Ա. Ս. (426—637), Լեն-

չեկովի Ա. Մ. (435—631), Լիտիցեանց Ս. Գ. (504—558), Մակարսկի Ֆ. Ի. (410—649), Մակարովի Ա. Կ. (327—727), Մասալով Ֆ. Ֆ. (339—739), Մեղիբ-Նուբարով Ա. Գ. (480—579), Մէլբուժով Ա. Գ. (280—777), Մէլբուժով Վ. Գ. (307—761), Միքէլաձէ Իշխ. Վ. Ս. (516—544), Միքէլաձէ Ս. Ա. (356—702), Միրիմանեան Բ. Մ. (362—693), Միրզոբեկ Գ. Զ. (461—598), Միտիկովի Ա. Ի. (436—624), Մամադեկ Ի. Ի. (461—601), Մուլին Տ. Ի. (492—572), Օշնուսով (507—543), Օղորդեկ (267—794), Օրլով Ա. Ն. (406—653), Օստրովսկի Ի. Ս. (434—627), Պանկրատով Ե. Վ. (347—717), Պասով Վ. Ն. (454—612), Պորֆիրիեկ Ֆ. Պ. (331—712), Պասարով Ի. Ե. (514—548), Բեմիզով Մ. Ֆ. (409—651), Բուսանով Գ. Ա. (444—619), Բիդ Ի. Ի. (375—684), Բոտինով Ա. Գ. (471—584), Բուզանով Ս. Ա. (311—750), Սոբենիկովի Ս. Ե. (306—735), Սելիբիցկի Ս. Ա. (510—552), Սոֆիեկ Աբաս-Կուլի-բեկ (336—725), Ստեպանով Գ. Ա. (375—683), Ստեպանեանց Ի. Ս. (364—700), Սուլխանով Վ. Ա. (389—671), Սուլխանով Ի. Ս. (437—625), Սուսուկեանց Ի. Մ. (450—609), Թամաշևի Ի. Գ. (485—573), Թամաշևի Ն. Ի. (524—538), Թարխանով Իշխ. Ե. Գ. (447—608), Թաթուզով Գ. Ե. (415—645), Թեկեբեկ Կ. Գ. (364—696), Տէր-Ասատուրով Գ. Բ. (511—550), Տէր-Գրիգորեանց Ա. Ի. (473—586), Տէր-Ղուկասով Բ. Ե. (401—655), Տէր-Ղազարով Գ. Ի. (354—706), Տիրիոն Վ. Ա. (331—731), Տիխանով Ա. Ի. (384—667), Տուրանով Ի. Գ. (495—566), Թումանով Իշխ. Ն. Զ. (456—604), Տուրովսկի Ա. Գ. (490—570), Տէր-Ղուկասով Ն. Ա. (498—558), Խարազով Գ. Ֆ. (396—662), Խաչատուրով Ա. Զ. (322—737), Խրիստոֆով Ա. Ի. (374—684), Խուզարով Ի. Մ. (345—715), Ծեղեկելի Գ. Ե. (489—587), Յեցիանով Իշխ. Գ. Ս. (403—657), Յիսկանաձէ Ն. Զ. (425—642), Յիսուպիսկի Ս. Ա. (331—733), Չավճակաձէ Իշխ. Ի. Գ. (504—559), Չեքեզով Իշխ. Վ. Ն. (523—537), Շահ-Ինով Ի. Ա. (506—558), Շահին Ֆ. Ի. (339—713), Շեքչենիկով Ի. Ա. (491—569), Շեխտակով Մ. Ս. (377—681), Էնֆիաճեանց Ա. Ա. (460—600):
--

Այդպիսով ընտրվեցին 57 ձայնաւոր, ուրեմն էլի պէտք է ընտրվեն 23 ձայնաւոր և 16 կանգնեցուցու, որ հաւանօրէն կը կատարվի առաջիկայ կիրակի օրը ընտրված 53 հոգուց 37 հայեր են, 11 առւանք, 8 վրայք, 1 գերմանացի: Այդ 53 հոգուց 37 հոգի հին ձայնաւորներ են, իսկ 20 հոգի նոր մարդիկ:

ՏԳԵՂ ԵՐԵՒԱՅԻՆՆԵՐԻ (Մամիկ Գուտաւից)

III

Շատ տարիներ չեն անցել այն ժամանակից, երբ կրօնը հայ գիւղացու պայմաններէն դարձող վարդապետներն եւ պիսկոպոս ձեռնարկելու եկամուտ օրէնքին հետ, ուստի պէտք էր սպասուէր լայն դժբախտաբար իր պաշտպանը՝ Ներսէս Վարձապետեան վախճանողու և նորոս յաջորդեց՝ Յարութիւն եւ պիսկոպոս Վահագնեան՝ որ նոյնը չէր, ինչ որ էր վարձապետեան՝ Օրմանեանի համար: Բաւական արգելքներ յարուցուեցան այն ատեն կրօնական ժողովը մէջ իջրուով առաջնորդին եպիսկոպոսանալու խնդրին, հակառակութիւններ տեղի ունեցան. Յարութիւն պատրիարք կըսէր թէ ինքն է իջրուով կենդանի եպիսկոպոսը. թէ օրէնք չէ՛ մինչ եպիսկոպոսը զեւ կապրի՛ ուրիշ մի ձեռնադրուի և այլն. սակայն Օրմանեան յաղթեց այս ամենուն և յաջողեցաւ հանդուցեալ Մակար կաթողիկոսի օրով ստանալ իր վկայականը Վահագնեան պատրիարքէն՝ թէ ինքն օրէնքին հակառակ նորոս կամացն և ստացաւ Մակար կաթողիկոսէն իր փախաբան եպիսկոպոսութեան մատանին, թաքն ու դաւադանը՝ զոր շատ ուշ ժամանակ պիտի տար իրեն պապական դերազօրն հոգեբարձութիւնը և կամ բնաւ երբէք:—Օրմանեան եպիսկոպոսութիւնն ստանալով այլ ևս կարող չեղաւ երկար ատեն մնալ իջրուով (արդէն եթէ տարի առաջնորդութեանը մէջ, հաղի երկու տարի իջրուով անցուցած, իսկ մնացած հինգ տարին Պոլիս, Մուշ, Վան, Թիֆլիզ, Էջմիածին և այլ տեղեր պտըտած է պաշտօնի և անպաշտօն ե-

համար ամենայն ինչ էր, երբ իր հասարակական, անհատական և ընտանեկան կեանքի ամբողջ բարոյական փիլիսոփայութիւնը ազէա զեղջուկը հիմնում էր միայն և եթ հաւատի էական վարձապետութեան, յաճախակի նայն իսկ և թիւր, սխալ բացատրութիւններ վրաս Եւ ոչ ոք այն ժամանակ երեկոյեկ անգամ չէր կարող թէ կը հասնի մի օր, մի ժամանակ, երբ նոյն բաւրի, բարձր գեղջուկը (և ոչ իսկ նրա սերունդը), նայն ազէա զեղջուկն իր փայփայած, սիրած կրօնը, կամ ինչպէս իրանք են ասում շուրջ հաւատը՝ կը դարձնի զգուցելի սպեկուլիացիայի, յաճախեալական կեղտոտ նպատակներ ռուարկայ: Սակայն այդ անպատեղին տխուր իրականութիւն է դարձել, և իբրև հասարակական մի խոչըր երեկոյեկ, որ իր մէջ արտացոլացնում է ժամանակակից գիւղական բարքերը, խորին ուշադրութեան և հետաքրքրութեան առարկայ դառնալու բոլոր պայմաններն ունի: Մեր խօսքը գիւղական հայ ժողովրդի մէջ երևան եկած դաւանափոխական ձգտման և դրա դրոյն պատճառների մասին է:

Անշուշտ ընթերցող հասկանում է, որ մենք չենք խօսում այնպիսի դաւանափոխութեան մասին, երբ մարդ իր հոգու, խղճի ազատ թելադրութեամբ և մտքի հասուն, կատարեալ զիտակցութեամբ թողնում է մի դաւանութիւն և ընդունում է մի այլը. այս բանի դէմ խօսել, կը նշանակէ խօսել առաջադիմութեան, ապագայի, մարդի ազատ թելադրի, խղճի ազատութեան դէմ, կը նշանակէ դատաւարեալ այն նահատակներին, որոնք խարոյկների վրա մրմնջացին յաբոտեանական ճշմարտութիւններ և իրանց բոցակեղ աճիւնացած սրբազան մարմինների նման աճիւնացրին, ցրել բերին անշարժութեան, կոյր մոլեռանդութեան ժամանակակից կուռքերին, անմահ գաղափարների յաղթանակը իրանց անունների հետ կտակելով ապագայ սերունդներին: Այն, մենք չենք խօսում այս բոլորի դէմ, մեր խօսքը դաւանափոխական այնպիսի ձգտումների մասին է, որ ներկայումս օրվայ շարքի է հանդիսանում և ամենատուր խորհրդածութիւնների առարկայ դարձնում հայ գիւղականներին: Բարոյականը:

Օրինակ, ինչ անուն կարելի է տալ այնպիսի վարձապետին, իւր գիւղում 60 տարեկան հայ գիւղացին իր բաճանայ եղբոր հետ վէճի է բռնուցում մի թիղ հողի համար և ահա իր եղբորից (քահանայից) վրէժ առնելու համար սպառնում է դաւանափոխ լինել, կաթողիկոսութիւն ընդունել, փոխել զդաւանը:

Մի ուրիշ գիւղում քահանայ չը կայ. թէև մերձակայ գիւղի քահանան կարողանում է հովուել այդ գիւղը, սակայն գիւղացիք այդքանով չեն դոճանում և ցանկանում են անպատճառ սեփական քահանայ ունենալ. և ահա մի իղիօտի ականջից բռնած քաչ կն տալիս դէպի Էջմիածնական): Իր գիւղակը վար առնուեցաւ, ժողովրդեան մեծ մասն իմացաւ իր առաջնորդին խաբուած լինելը. կառավարական պաշտօնեաներն ալ հաշտ աչք չէին նայր իրեն, և սըրբազանին ուղածն ալ այս էր. միայն թէ իր քաղաքականութիւնը փոխած լինելով՝ եթէ վրիշտ մը ունէր՝ ան էր թէ—ինչու համար թիւրք կառավարութիւնը հաշտ չէր իրեն հետ... Այս բանն իր գործին չէր գար, ուստի գնաց մաշու Գարեգինուց ընդհանուր տեսչութիւնն և համառուն վանքի փոխ-վանահայրութիւնն ըստանալով Ալեքեանի կատարեալ խորհրդակալը դարձաւ և վերջապէս յաջողեցաւ, նրա շնորհիւ, թիւրք կառավարութեան աչք մտնել՝ ու Ալեքեանը կաթողիկոսացելու և եթ նպատակաւ, սուլթանէն Օսմանիէ պատճառնալով հանդերձ՝ կրորիկ դուռնալով Կոստանդնուքը և Պոստոյ պատրիարքի (Ալեքեանի) կողմէն՝ երբևէ կեկեղեցական պատգամաւոր Էջմիածին երթալ 1892-ին՝ ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու համար: Այստեղ աւելորդ կը համարվը մի առ մի թուել այն մեքենայութիւններն ու էնթրիկներն, այն պատճառով յաղապարտութիւններն, այն պատճառով յաղապարտութիւններն և այն դաւալից նենգութիւնները, զոր ի դոճը դրաւ նա Ալեքեան պատրիարքի ընտրութիւնն յաջողցնելու համար. աւելորդ է

ծին Եւ ոչ ճրաչք. էջմիածնի ներկայ վարձութիւնը այս քահանայացուին համարում է ազէա (պէտք է զարմանալ, այդ օր աստիճանի տգիտութիւն է եղել, որ էջմիածինն էլ է զգացել) և մերժում է ձեռնադրել: Չէք ձեռնադրէ՛ք, հարցնում են բարեպաշտ, կրօնասէր գիւղացիք:—Ոչ, պատասխանում են, ձեր տիրացուն ազէա է, շատ ազէա է Վաւ, որ այդպէս է, մենք դաւանափոխ կը լինենք, ֆրանկ, կաթողիկ կը դաւանալք և մեր տիրացուին տէրտէր կանենք:»

Չը մոռանանք ասել, որ այս սպառնալիքները դատարկ չեն անցնում, փորձերը տեսել ենք...:

Ընտանեկան կօրև, ժամանկութեան վէճ կայ, դարձեալ դաւանափոխութեան խնդրի է ծագում:

Անյարմար ենք համարում խօսել բազմաթիւ աշխարհի ստանալու և իր մասին, երբ զուտ շահախնդրական, կամ վրէժխնդրական նպատակները դրդված հայ գիւղացիները խմբովին դիմում են կրօնափոխութեան փոխադարձ ասելութիւն սերմանելով իրանց շուրջը: Այսպիսի դէպքերում ամբողջ հոգեբանութիւնը հրաչնդներ է դործում. բարձր ձգձգացող, ճամարտակող գեղջուկ իմաստակը հիպոնոզացնում է մնացածներին, կազմում են ծրագրեր, ապագայ նիւթական բարեկեցութեան պերպեկտիվան գրաւում է ամենքին և մասսան առանց արածը քննելու, առանց հաշիւ տալու՝ դիմում է մէկի ետեկի: Եւ այսպէս հայ գիւղացին ներկայումս ցինիքական պարզութեամբ ի վաճառ է հանում իր երեկվայ աւանդական սրբութիւնը, առանց ամաչելու ցնցոտիների մէջ կօլոված այն թշուառներից, որոնք նրա դուռը բաղտում են փչրանքներ հաւաքելու համար, որոնք արևելին և կրակին անթիւ դոճեր են տուել, որովհետև չեն կամեցել ասելի ծանր պայմաններում ծախել իրանց հոգու մարգարիտները...:

Ինչով բացատրել հայ գիւղացու այս բարոյական անկումը. ստուկալի չէ միթէ, երբ համոզված ես, որ թո առաջ կանգնած մարդը պատրաստ է օրը մի կրօն փոխել, միայն թէ ամենայն օր համոզված լինի, որ այդ բանից ինքը նիւթական շահ ունի: Այս երևոյթն արգասիք չէ՛ նրա հոգու անյարմար դատարկութեան, ուր կամաց-կամաց ընկնում կորչում են այն բոլորը, ինչ որ մինչև այժմ նրա համար թանկ էր, նըւթական և վսեմ բանական մտածող արարածը այսպիսով դառնում է մի մեքենայ, խիղճը դաւարում է թելադրելուց, և գիւղացին դառնում է մի հրէշ, որ երկու կողմէկ համար պատրաստ է ամեն մի սրբութիւն ի վաճառ հանել, չիւր մօր ծիծը կարել, ասում է ժողովրդական ասացուածքը:

Ա. Ահարոնեան

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐՈՒԹՅԱՆ

Մայիսի 11-ին

Այսօր կայացաւ Պետերբուրգի ծխականներին ընդհանուր ժողովը, որը պիտի ընտրէր խորհրդի անդամներ: Թէ հիմա եւն ընտրուած և ինչ են անում, մեզ չէ հետաքրքրում, որովհետև անհամար թէև օրէնքով լիազորութիւն և ձայնները հաւասարութիւն են վայելում, բայց գործընկերները մեզ մեռած տառ են, և հլու հնազանդ նախագահին:

Յայնմ է, որ 1883 թ.ին, բարձրագոյն հաստատութեամբ, մայրաքաղաքներէ եկեղեցիներին տրվեցին կանոններ, որոնցով ծխականներին յանձնվում էր եկեղեցիները իրանց ամբողջ նիւթակազմով կառավարելու իրաւունքը, ընտրելու 6 հոգուց բաղկացած մի խորհուրդ, որը պիտի հսկէ եկեղեցիների գոյքի վրա և անտես չուկառավարէր զրանց: Այդ կարգադրութիւնը բոլորովին համապատասխան էր մեր ժողովրդական եկեղեցու դարեր սկզբունքներին, եկեղեցիները լաւարեաններէ անցնում էին ժողովրդին: Բայց, դժբաղդաբար, ծխականներին ստանութեան և թեմական առաջնորդի անհոգութեան պատճառով այդ իրաւունքը այնպէս սահմանափակվեց հէնց իրանց ձեռքով, որ իրանք էլ մնացին դարմացած: 1883 թ.ին կանոնների 7-րդ կէտն ստուծ է՝ խորհրդարանների պարտաւորութեանց չըջանալ մայրաքաղաքների հայոց եկեղեցապատկան ստացուածքների կառավարութեան մէջ, նոյա հաշտագահութիւնը և նոյա գործավարութեանց մանրամասն կարգաւորութիւնը որոշվում են յիշեալ եկեղեցեաց հոգաբարձուի համաձայնութեամբ թեմական առաջնորդի, հետևանքին հրահանգով, որ կը հաստատուէ թեմական առաջնորդը, ի նկատի ունենալով գոյու յուր և ունեցող օրէնքները: Այս յոդուածը շատ պարզ կերպով թողնում է մանրամասն ներքին կանոնադրութեան կազմելը նախագահի և առաջնորդի վրա՝ առաջնորդի հաստատութեամբ: Շատ պարզ է, որ օրէնքը ծխականներին յանձնելով եկեղեցու կառավարութիւնը, խորհրդի անդամների ընտրութիւնը, կառուածքների վարչութիւնը, լիակատար իրաւունք է տալիս՝ գոյու թեմ ունեցող օրէնքների հիման վրա՝ հսկելու խորհրդի անդամներին արածի, գործածի, զեղծումների և բոլոր գործողութիւնների վրա, այնպէս, ինչպէս քաղաքային ընտրութիւնների, բարեգործական հաստատութիւնների մէջ ընտրուած է: Ուրեմն, օրէնքների հիման վրա, ընդհանուր ժողովը պիտի վերահաստատուէ յանձնաժողովի անդամներ ընտրի, ընտրութեան ենթակայի խորհրդի գործավարութիւնը: Բայց, դժբաղդաբար, ոչ միայն ընդհանուր ժողովը այդ իրաւունքներից զրկվել է, այլ մինչև իսկ իրաւունք չունէ ձայն-ծուրուտ հանելու խորհրդի գործավարութեան մասին, այլ պիտի, իբրև մեզնայ, անդամներ ընտրի և հետևանք: Այս տարօրինակ կարգը հակառակ է պետական օրէնքներին և հայոց եկեղեցու կանոններին: Ո՞վ է սրա պատճառը: Թեմական առաջնորդը Գրիգոր եպիսկոպոս Աղափրեան, որի հաստատած հրահանգի 44-րդ կէտն ստուծ է. «Եթէ ծխականները եկեղեցական ընտրուածքների օգտի համար պէտք են համարում որ և է առաջնորդութիւն կամ յայտարարութիւն անել՝ այս անուծ են ընդհանուր ժողովից դուրս՝ եկեղեցական խորհրդարաններին գրաւոր կերպով: Եթէ այս գրաւոր առաջարկութիւնները ստորագրված են առնուազն 30 իրաւահաս ծխականներից՝ խորհրդարանները իրանց որոշումը հաղորդում են ընտրադրոշներին՝ հաւասարամասորի միջոցով և խորհրդարանի այս որոշման պատճէնը ուղարկում են թեմական առաջնորդին՝ ի գիտութիւն և ի պարտ ու պատշաճ անորոշութիւն: Սրանից էլ հակառակմանակաւ կանոնադրութիւն կարելի է սպասել այնտեղ, ուր քեզ իրաւունք են տալիս կազմել կանոններ՝ համաձայն օրէնքի: Միթէ առաջնորդը Բիշինելում և բաղամբիլ քաղաքներում չէ տեսել քաղաքային իրաւասունների և ընկերութիւնների գործավարութեան եղանակները, ձեռքը: Այդ հաստատել է 1887 թ.ի օգոստոսի 21-ին:

Իսկ 1888 թ.ին, մինիստրի բացատրութիւնից յետոյ, նոյն եպիսկոպոսի արած փոփոխութիւնները 42-րդ կէտում ասված է. «Որովհետև ընդ-

հանուր ժողովները գումարվում են պաշտօնեաներ ընտրելու համար և եթէ ուստի ընդհանուր ժողովի նախագահի պարտաւորութիւնն է՝ թող չը տալ ընտրութեան անհեղու այնպիսի խնդիրներ, որոնք ընտրութեան անց չեն վերաբերում: Եթէ այս պայմանը չը գործադրվի՝ ժողովը կը համարվի անօրինի և չը կայացած, և նրանում կատարված ընտրութիւնները՝ անվաւերական: (Տես մինիստր. բացատր. 1888 թ. մայիսի 23, № 2681): Ոչ մի կերպով չէ կարելի բացատրել Աղափրեան եպիսկոպոսի արածը, եթէ ոչ անհոգութեամբ, իրանից բարձր հոգեւոր իշխանութեան հայեացքը և անօրինութիւնը չը հարցնելով և նախագահի ազդեցութեամբ, խաթրել չը կտարելով: Բացի դրանից, հակառակ Պօլոսէնիէի և մեր եկեղեցու օրէնքներին, քահանաներին ընտրում են ոչ ժողովուրդը, այլ նախագահը և առաջնորդը: Ծխականները լուծում են, որովհետև քաղաքային չունեն իրաւունքի վրա, առաջնորդները լուծում են, որովհետև խաթր կտարելը լաւ չէ, տակից վատ բան դուրս կը գայ: Գրանց բոլոր ժողովները դուրսից են, ինչու, իրանք էլ չեն իմանում: Եկեղեցին ստանայ տարեկան 60—70 հազար ռուբլի արդիւնք, և ոչ մի աչքի ընկնող զգալի հետեւանք չունենայ:—այդ հնարաւոր է միայն մեր մէջ և մեր խոր քնով քնած եկեղեցական վարչութեան մէջ: Մ—Թ.

ՆԱՄԱԿ ԴԵՐԵՆԻՆԻ

Մայիսի 13-ին

Մայիսի 12-ին, կէսօրից յետոյ, չը տեսնված առատութեամբ կարկուտ եկաւ, ընկողն մեծութեամբ, և անեց մօտ 15 րոպէ: Գերբերդում առնասարակ կարկուտ չէ գալիս և ձերբերդ պատում են, որ այսպիսի բան իրանց կեանքի մէջ չեն տեսել: Մօտ 4 վերստ տարածութեամբ բոլոր այգիները փչացրել: Ժողովուրդը սարսափի մէջ է. ամբողջ քաղաքը արտասովոր է: Կենտրոն, սպորտային միակ միջոց էր խաղողը և 15 րոպէում բոլոր յոյսերը օդը ցնդեցին: Վնասը հարիւր հազար ռուբլուց անցնում է: Խոնաւ եղանակների պատճառով՝ խաղողի հիւանդութիւնները սաստիկ դարձանում են կարկուտից ազատված այգիներում, ցանկալի է, որ կառավարութիւնը մարդիկ ուղարկէր հիւանդութիւնները ուսումնասիրելու և բժշկելու եղանակը սովորեցնելու: Առանց չուստալով օգնութեան ոչ մի հետեւանք չէ կարելի հասնել: Այգեպէրները իրանց վերջին կօպէկը ծախսեցին այգիները փորելու, ջրելու, և այժմ, ամբողջ երկու տարի ոչ մի միջոց չունեն ապրելու, էլ ուր մնաց մտածեն այգիները բժշկելու: Բացի խաղողի այգիներից փչացան բոլոր մրգերը, բանջարանոցները, չըջալայ գործերի արտեղծը: Տները շատ պատուհաններ փչրվեցին, այնպիսի տներ կան, ուր մինչև 200 ապակի կտորովեց, ամբողջ քաղաքում ապակի չէ ճարվում: Եղածները կրկնապատիկ գնեցով ծախվեցին մի քանի ժամվայ մէջ: Հրէաների և թուրքերի տները հեղեղի ջրով կիսով չափ լցվեցին: Շատ տներում կահկարասիքը փչացած է: Եթէ բոլոր վնասները միասեղ հաշուէք՝ 200,000 ռուբլուց անց է: Մասնաւոր նպաստներով ժողովուրդը չէ կարող ոտքի կանգնել, հարկաւոր է կառավարութեան չուստալով օգնութիւնը: Ա. Թաղէտեանց

ՆԵՐՍԻՆ ԼՈՌՆԵՐ

Մեր պարտականութիւնն ենք համարում շեշտել այն ուրախալի փաստի վրա, որ մայիսի 18-ին քաղաքային ձայնաւորների ընտրութիւնները կատարվեցին մեծ կարգապահութեամբ, և ոչ մի անախորժ դէպք չը խանգարեց ընդհանուր կարգը և ընտրողների քաղաքավարի յարաբերութիւնները: Դա լաւ նշան է, որ մեր ազգայնականութեան ներկայացուցիչները, որոնք թեւուած են իրանց քան հազար հոգի հաւաքվել էին կըլուրի շինութեան մէջ, գիտեն յարգել կարգը և պահել իրանց վայելուչ կերպով: Այդ օրը կարգապահված էր կըլուրի բուֆետում թունդ խմիչքներ չը վաճառել, երկու կերպով, որ խմիչքների ազդեցութեան տակ կարող են անախորժութիւններ պատահել... Մենք կարծում ենք, որ հասարակութիւնը այնքան բարեկիրթ է, որ կարելի չը կայ այդպիսի միջոցների դիմելու...

Մեզ հաղորդում են, որ հանգուցեալ Յովհաննէս Խոզազեանցի եղբայրը զանգաւ է սկսում իր եղբոր կտակի դէմ, որով նա իր ամբողջ կարողութիւնը թողել է հայոց Բարեգործական ընկերութեան: Գրանից աւելի մեծ նախատիք մի մարդու կողմից դէպի իր մեռած եղբոր յիշատակը, — մենք երեակայել չենք կարող:

Ձայնաւորների շրջանում արդէն խուլ խօսակցութիւններ կան ազգայ քաղաքազլի մասին: Առաջիկայ քառամեակի 80 ձայնաւորներից 57-ը արդէն ընտրվեցին, և ուրեմն անտեղի չէ դրադիվի ազգայ քաղաքազլի անձնաւորութեամբ: Շատ կանդիդատների անուններ են տալիս խօսուած են, օրինակ, Կոնստանտին Ռէյսէրի, փաստաբան Օլոսիինի, Կոնստանտին Ալիսանովի մասին: Խօսք կայ նոյնպէս և նախկին քաղաքազլու իշխան Դ. Արքատիւինում, ինչպէս և քաղաքազլի այժմեան պաշտօնակատար Խլանեկոյի մասին: Առանց մանելու այդ անձանց յատկութիւնների կրիտիկայի մէջ, վստահ կարող ենք յայտնել, որ Կոնստանտին Ռէյսէր, թէ իր անձնական յատկութիւններով և թէ թիֆլիսի ազգայնականութեան մէջ ունեցած ժողովրդականութեամբ միանգամայն ցանկալի թեկնածու է քաղաքազլին պաշտօնի համար: Այդ ժողովրդականութեան ազգայցի պէտք է համարել և այն, որ նա մայիսի 18-ին ստացաւ անձնից շատ սպիտակ բուէներ:

Այս օրերս լոյս տեսաւ «Ազգաբանական Հանդիս» այս տարվայ առաջին դիրքը:

Ղարաբաղի թեմի կառավարիչ Սթիւնեան վարդապետը և կոնստանտինոպոլիսի Կարապետ Մալիկ խնդրելով Ա. Բարեկարգի և աշխատակից Հ. Առաքելեանի դէմ, վերջինի մի թղթով թակցութեան առիթով, մեղադրելով նրանց գիֆուտային մէջ, թիֆլիսի դատատանական պաշտօնը, որտեղ քննվում է այդ գործը, նկատողութեան անհեղու Հ. Առաքելեանի խնդրազիրը, որով նա խնդրում է պահանջել էջ միտնի սինօզից Սթիւնեանց վարդապետին վերաբերեալ մի քանի դոկումէնտներ, մայիսի 13 ին սրեցնէ՝ իրաւունք տալ ստանալու այդ դոկումէնտները էջ միտնի սինօզից:

«Черноморскій Вѣстникъ» լրագրի ասելով, թաթում եկած օտար շոգեխաւերը հաղորդում են, որ այժմ Անաստրախի փոխուած կատարեալ խաղաղութիւն (?) է տրուած:

Մինչև այժմ քաղաքները միայն բարձրագոյն թղթաւորութեամբ իրաւունք ունեն ջաղաքային հողեր յատկացնել այս կամ այն անձին կամ հաստատութեան: Այժմ հրատարակված է օրէնք, որով քաղաքներին իրաւունք է տրվում կատարել այդ բոլորը առանց դիմելու բարձրագոյն թղթաւորութեան կամ նոյն իսկ ներքին գործերի մինիստրի համաձայնութեան:

Շաբաթ գիշեր, մայիսի 18-ին, անյայտ գողեր, ծակելով թիֆլիսի վաճառական Գրիգոր Բաջանդուրեանի խանութի ստաստաղը, ներս են մտել և կտորելով երկաթէ սնդուկը, տարել են այնտեղ եղած առձեռն դրամը, և արժէքաւոր թղթերը, արժողութեամբ մօտ 25,000 ռուբլու, և ոչնչացրել են սնդուկում եղած մուրհակները: Գողութիւնը, ըստ երկայնի, կատարել է մի մարդ, որ մի քանի ժամանակ առաջ վարձել էր Բաջանդուրեանի հարկան խանութի վերին յարկը: Այդ մարդը այժմ անհետացել է:

ԱՐՏԱՌԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռէյսերի գործակալութեան Կ. Պօլսի թղթականից մայիսի 19/7-ից հեռագրում է հետեւեալը. «Սեր Ֆիլիպ Կրրի երէկ ուղղեց թեմի վրայի մի նամակ, որով զանգատվում է թօքատում հաստատված բարձրագոյն դատարանի անհոգութեան վրա. այդ դատարանը պէտք է քննի մուսուլմանների գործողութիւնները կոտորածների միջոցին. բացի դրանից ոչ մի ընթացք չեն ստացել եղած դատավճիռները և չեն պատժված յանցաւոր պաշտօնեաները:

Անգլիական համալսարանի մայիսի 20/8-ի նիստում պատգամաւոր Ֆիլիպ հարցաքննուած արեց թօքատի գործերի մասին, որին պատասխանելով կըրդօն ստաց հետեւեալը. «Անգլիական մեր դեսպանը դեռ չէ զեկուցել մեզ թէ ինչ հետեւանքներ են ունեցել այն առաջադրութիւնները, որ նա արել է Բ. Գրանի թօքատի յանձնաժողովի մասին: Ես յոյս ունեմ, որ չուտով մենք կունենանք այդ մասին հաղորդագրութիւն»:

«Standard» լրագրի Կ. Պօլսի թղթականից հաղորդում է. «Մասնատական ազգայնականութիւնը շատ դժգոհ է պատերազմի դադարումից, և դրա մէջ տեսնում է թիւրքաց կառավարութեան թուլութիւնը, որ հնազանդվում է Ռուսաստանից եկած հրամաններին: Կ. Պօլսում տիրող դժգոհութեան պատճառով, շատացրել են պահանջներ թիւրք այն պատրուակով թէ հայերը նոր ցոյց են պատարաստում, սահմանադրութեան տարեդարձի առիթով:—Թիւրքաց կառավարութեան հիւանդոտ երեակայութեամբ՝ հայերը ամեն օր և ամեն տեղ ցոյցեր են պատարաստում:

Ն Ա Մ Ա Կ Շ Վ Է Գ Ի Ա Յ Ի Յ

Ստոքհոլմ, մայիսի 10-ին
USO-ՀՈՒՄԻ 1897-Ի ԱՐՈՒՍԱՀԱՆԴԻՍԸ

I
«Ատուած օր մը սուտ քիչ մը Նէսպօլսի ծովեզրերէն, քիչ մը Մոլմաթոյ ծովէն, քանի մը հաս Hyeres-ի կղզիներէն և քանի մը ժայռ Ռուրալի լեռներէն, մաս մը կանաչալի անտառներէն և քանի մը թաղ Պարիս քաղաքէն, զայս ամեն դուր պարի մը մէջ, խառնեց և նետեց Բալտիկի մէջ ծոցին ափուրջը. առաջիկ Շուեթի թագաւորութեան մայրաքաղաքն՝ որ կը կոչվի Ստոքհոլմ: Այսպէս կը գրէր 1889-ին գերմանացի Max Nordau իւր «Կրնիլինէ մինչև Ալ-համբա» մատենին մէջ: Իրաւ է, որ վերջին 30—35 տարիներուն մէջ Ստոքհոլմը բնական գեղեցկութեան վրա մեծապէս աւելցած է արուեստական ալ և շատ քանք եղած է, որ մայրաքաղաքի արժանաւոր կերպարանք արուի Մեյլաւ լճի թաղաւանդն՝ լայն փողոցներ բանալով, հոյակապ տներ կանգնելով՝ որ պաշտօնեալու կը նմանին, քաղաքին ամեն կողմը հաղորդակցութիւնները շատցնելով և դիրքացնելով: Երբ և փաստաւոր չէնքեր են արքունի մատենադարանն, ազգային թանգարանն զեղարուեստից, հիւսիսային թանգարանն (Շուեթի հուսթիանոյ), արքունի թատրոնը արանն (Opéra), մեծ պանդոլն (Grand Hotel): Երբ և նաև Skansen (Սքանսըն) կոչված ժողովրդական պարտէզն՝ ուր ամենայն ինչ հին Շուեթը կը յիշեցնէ, Djursholm (ձիւսոսոլմ) և Saltsjöbaden (Սալտսյօբադըն) կոչված ծովեզրեայ դիւրազանցութեան վայրերն՝ իրենց սիրուն ամառանոցներով: Եթէ ամառն գեղեցիկ ըլլայ անամպ երկնքով և առանց կծու հովերու, երկու երեք շաբաթ ի Ստոքհոլմ անցունեն շատ ախորժեղ է, մասնաւոր յոյսեր սկըբէն մինչև յուլիսի կէսը՝ երբ երեկոյներն այնչափ լուսաւոր են, որ ինչպէս և Պետերբուրգ այնպէս ալ ի Ստոքհոլմ հարկ չը մնար փողոցները և հրապարակները զազով կամ երկարաւանութեամբ լուսաւորելու, և կէս գիշերին պատուհանի մօտ նստած՝ կարելի է կարգաւ և զրել համարեն թէ ցերեկվան պէս:

Տարւոյս սեպտեմբերի 6/18-ին պիտի բոլորի Ռոկար Բ-ի թագաւորի գահակալութեան քանակահինգ ամեակին: Ստոքհոլմ՝ որ ունեցած է իր առաջին արուեստահանգէլը 1866-ին, յարմար առիթ սեպեց երկրորդ արուեստահանգէլի այս տարի, յորում մեծ շքով պիտի կատարուի Ռուկար Բ-ի խաղաւէտ թագաւորութեան կէս—յօրեկանն: Թէ որչափ յառաջադիմած և զարգացած է Շուեթի մայրաքաղաքն 1866-էն ի վեր՝ հետեւեալ երկու թիւերէն բաւական կը յայտնուի, յայնժամ ընտկալը՝ գոտարն էր իւր 140,000, իսկ այժմ՝ գրեթէ 300,000. յայնժամ քաղաքին կայուն ստացուածոց արժէքն էր 120 միլիօն քրոնա (1 քրոնա=50 կօպէկ), իսկ այժմ աւելի քան 500 միլիօն: Հրախրուցան Նորուեզիա և Գանիա՝ իբր Սկանդինաւեան եղբարը՝ մասնակցել Շուեթի արուեստից և ճարտարութեանց ազնիւ մրցակցութեան. օտար պետութիւններէն ալ հրախրուցեալ միայն Ռու-

աստան, այս պատճառով սկանդինավեան-
ուսական կը կոչուի արուեստանոցէն՝ որ
բացուեցաւ մայիսի 3/15-ին՝ Սոփիա թագուհւոյ
անուան տօնախմբութեան օրը, և սիրտի փակ-
վի սեպտեմբերի 18/30-ին:

Մայիսի յիշեալ օրը ճիշդ կէսօրին, երբ Ու-
կար Բ. զօրապետի համազգեստ հագած՝ կը
ձարտարութեան պալատին արտաքին վերնա-
տունը, ուր պատրաստուած էր իր դահլը, հետն
ուսնանալով Սոփիա թագուհին և չորս արքայոր-
դէքը, Գանիայ փրեզիդէնթ թագաժառանգն և
նորա կինը Լավրա Էլիանուհին (որ Շուեթի
կարողս ժե թագուհոյն Պոկար Բ-ի եղբոր
դուստրն է), ղեկավարեալ մարմինն՝ իրաքան-
չիւր պաշտօնեայ իր համազգեստով և շքանշան-
ներով, պալատական տիկիններ, այլ և այլ
բարձրաստիճան պաշտօնատարներ՝ թէ զինուո-
րական և թէ քաղաքական կարգէ, և ահա 400
այր և կին երգիչներ և 100 երաժիշտներ հնչե-
ցուցին ազգային երգը, որու զվարճաց ունկնդ-
րեցին ըզրօր հանդիսակները. յետոյ սկսան նուա-
զել զեղեցիկ խմբերգութիւն մը՝ զոր յատուկ
նոյն օրուան հանդիսին համար յօրինած էր համ-
ուսաւոր բանաստեղծն Carl Snoilsky, և Steh-
hammar երգահանն ալ եղանակի վրա առած:

Խմբերգութեան վերջը արուեստանոցիսին
գահերէցն, որ է նոյն ինքն Շուեթի թագաժա-
ռանգն Գուստաւ Իլիանս, քանի մը խօսք ուղ-
ղեց առ թագուհուն, և թագուհուն ալ համառօտ
բայց իմաստալից բանախօսութեամբ՝ բացուած
հրատարակեց արուեստանոցիսը, զոր ողջունե-
ցին ըստնուէի հարուածը թիւղանօթի, զինուո-
րական փողերու և արուեստանոցիսին չրջա-
պատին մէջ գտնուած զանազաններուն զուարթ
հնչիւններն, և 500 երգիչներու և երաժիշտնե-
րու վերջին մէկ երգն: Ներկայ էր հանդիսին
նաև Mr Williams անգղիացին, որ վիեննայի
1873-ի արուեստանոցիսն ի վեր սովորու-
թիւն ըրած է գտնուիլ ամեն արուեստանոցիս-
ներու բացման, անմեղ նորօրինակութիւն մը
որ կերտի թէ մեծ հաճոյք կը պատճառէ պա-
րոնին:

Նորայր Ն. Բելզանդացի

ՆԱՄԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմիա, մայիսի 1-ին

Երեք օր է որ մի անգիրացի ճանապարհորդ
հասել է այստեղ: Նա մեկնել է Պոլսից իր եր-
կու ամիս առաջ և չըջելով նախ Տրապիզոնի և
կարնոյ նահանգները, այցելել է նաև Բիթլիզի
և Մուշ և յետոյ վանայ քաղաքն հասնելով մի
քանի օրեր զբաղվել է ժողովրդեան ներկայ վի-
ճակի ընտելումը: Այստեղից նա ուղևորվելու
է դէպի Սուլթուզ, Սուրբուրաղ և Մարաղայ և
յետոյ Թաւրիզի վրայով գնալու է Թիֆլիս Ատուժ
են որ նա բաւական նոր և հետաքրքրական տե-
ղեկութիւններ հաւաքել է հայերի ներկայ տրա-
լի զրուցեան նկատմամբ, որոնց նա տեսել է իր
ճանապարհորդական ընթացքում:

Սալմաստից լուր է ստացված, որ վանի Ա-
մերիկեան միտիոնար Մր. Աւելը վերջապէս
յաջողել է 2—3 հարիւր լաւ եղևեր գնելու, ո-
րոնց նա արդէն Շաքախեղեան Շահէն արայի հըս-
նայ կողմէն տակ ուղարկել է վաստակողական
զիւլաքաց բաժնուր: Սամանեան կառավարու-
թիւնը յատուկ ստիկան զինուորներ է ուղարկել
մինչև Խոթուր, որպէս զի այնտեղից ուղեկցեն
Շահէն Աղային իր հօտը ապահով հասցնելու
վան:

Արդոս

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի ծաղաշար ճ եր ո ս ը: Անգլիական հա-
մայնքների ժողովի մայիսի 20/8-ի նիստում, երբ
արտաքին գործերի բարոն-կար կըրդօն պատաս-
խանում էր Չարլզ Կիլին Աֆրիկայի գործերի
մասին, ներս մտաւ արքայազն Վիկտորիան հե-
րոս, սուլթանի անձնական բարեկամ, անգլիա-
կան պարլամենտի անդամ Ա. մ. ք. Բ. արտաքին
ժողովում խկոյն բարձրացաւ ծիծաղ և հոհոց:
Ինչո՞ք անաղին արմուկով գնաց պատե-
րազմ, բռնակ, զերի ընկաւ, քիչ էր մնում զո՞՛
գնաւ յոյների կատարութեան, և ահա երբ այդ
սղեկագետն ճանապարհորդութիւնից յետոյ վե-
րադառնում է հայրենիք, նրան ընդունում են
համերկան ծիծաղով...

*

Մայիսի 10-ին, Հոսմի համալսարանի դահլի-
ճուժ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց ի
խիշատակ պատգամաւոր Ֆրատտինի, որը սպան-
վեց Յունաստանում, պատերազմի դաշտում:
Այդ առիթով խմբերանին մի հանդիսաւոր ճառ
խօսեց, որի մէջ ամենախիստ յարձակումներ
արեց Գերմանիայի դէմ: Նրա ճառը կատարի
սղեկագետն առաջ բերեց ունկնդիրների մէջ:
Լավուժ էին աղմուկից աղաղակներ շնորհ կոր-
չի Գերմանիան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մայիսի: Բարձրագոյն հրամայ-
ված է Նորին Մեծութեան սեփական դիւանա-
տան կառավարիչ Տանէկովին Նորին Մեծութեան
սեփական դիւանատան գլխաւոր կառավարիչ
լինել:

ՕԻԿՍԱ, 17 մայիսի: Պետերբուրգից եկաւ կա-
ռավարչական Սենատի քրէական վճռալիցի դէ-
պարտամէտը օրէր-պրօկուրօր Սուշեկովի և այ-
ցիւնց Տրասսուլօի մօտ գտնուող Տէրսովկա զիւղը,
որ ղեկավարեալ էր պալատի պրօկուրօրի,
նահանգական դատարանի պրօկուրօրի և դա-
տաստանական վարչութեան ուրիշ պաշտօնեա-
ների հետ միասին քննեց այն տեղը, ուր կեն-
դանի թաղված էին ֆանատիկոս ընդհուօղիցի
արաւելազները: Առ այժմ գտնուված են 25 դիակ-
ներ, որոնց թաղել էր այդ արանդի նախկին
ճգնաբանների զանազան անդերուժ գիւղացի-
ազանաւոր Ֆէօդօր Կովալեւի:

Կ. ՊՈԼԻՍ, 17 մայիսի: Յունական «Արտե-
միդիա» շոգեհաւը աղաւթ է թողնուած ղեկաւն-
ների բողոքի պատճառով:

ԼՕՆԴՈՆ, 17 մայիսի: «Times» լրագրին Կ.
Պոլսից հեռագրում են, որ Բ. Գուռը պատաս-
խանեց ղեկաւնների յայտագրին իր պատաս-
խանի մէջ նա քննութեան վէ ենթարկում խաղա-
ղութեան պայմանները, պատրաստակաւ թիւն
յայտնելով ըստակցութիւններ վարել ղեկաւն-
ների հետ, հէնց որ ղրկաղագրի ձեւակաւու-
թիւնները վերջացած կը լինեն, և ցանկութիւն
է յայտնում խաղաղութեան դաշնագիր ստորա-
գրել Ֆարսալում:

ՀՈՍՄ, 17 մայիսի: Գաղաքանում սկսվեց
Ալլիարիտի գործի ընդունութիւնը: Մերգրեալը
իր ճարի մէջ ասում էր, թէ սպանութեան փորձը
նախատեսած էր, այսպ թէ ոչ ուսուր կը գոր-
ծածէր:

ԼՕՆԴՈՆ, 17 մայիսի: «Morning Post» Կ.
Պոլսից հաղորդում է, որ հրաման է արված
Միրայից 30 բառայիններ ուղարկել դէպի
սերբ-բոզարական սահմանը: Վեց նաւեր ճանա-
պարհ ընկան կիւրված հրամաններով:
«Times» լրագրին Աթլիքից հաղորդում են,
Յունաց կառավարութիւնը, յոյս ունի որ պատե-
ղագական վարձատրութիւն տայու համար իրան
կաջողվի, երբ պետութիւնները: Բուսաստանի,
Ֆրանսիայի և Անգլիայի երաշխաւորութեամբ,
փոխառութիւն անել Յունաստանից զուրս:

ԼՕՆԴՈՆ, 17 մայիսի: Իրլանդական պարլա-
մենտական կուսակցութիւնը մի որոշում կայա-
ցրեց, որի մէջ թւած են բոլոր զբոհողութիւն-
ները և վճարված է չը մասնակցել թագուհու յօ-
բեւանի տօնախմբութեանը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մայիսի: Մայիսի 17-ին Թա-
ղաւոր Կայսրը և Կայսրուհին Ալեքսանդրա Ֆէօդօ-
րօւնա Օդեստաւորա աղկայի հետ Ֆարսիօն-Սե-
լօից գնացին «Ալեքսանդրա» ամառանոցը Նոյօ-
Պետերսօնում:

ՍՕՖԻԱ, 18 մայիսի: Մակեդոնական կոմիտէ-
ները Սօֆիայում և Ֆիլիպօպօլում որոշեցին
վերջնականապէս հրաժարվել որ և է բորժոգու-
թիւնից Մակեդոնիայում, որովհետեւ գործերի
ներկայ դրութիւնը նպատակօր չէ դրան, և
բողաբական կառավարութիւնը դէմ կը լինի
դրա նման որ և է փորձին կօմիտէները կա-
մենում են սպանել Թիֆլիսի ձեռնարկած ըն-
ֆօրմների հետանգներին:

ՊԵԿԻՆ, 18 մայիսի: Նոր ուսուցք բանկը բաց-
վեց մայիսի 28-ին մեծ հանդէսով, Ֆրանսիա-
կան, ընդհանրական դեսպանների և ամբողջ ուս-
սաց կօմիտայի ներկայութեամբ:

Կ. ՊՈԼԻՍ, 18 մայիսի: Թիբեթաց պաշտօնական
աղբիւրները հաղորդում են, որ յունական նա-
հանգներում թիբեթաց կառավար զինուորներին
վերադարձած յանցանքների մեծ մասը կատարել
են այն կալանաւորները, որոնց յունական զօր-
քներ անձակել էին բանտից յետ նահանջման
ժամանակ, և այդ բանը հաստատուած են այնտեղ
եղած թղթակիցները:

Կ. ՊՈԼԻՍ, 18 մայիսի: Բ. Գուռը խնդրում է
ղեկաւններին զրդել յունաց պատուիրակներին
զայ թիբեթաց գլխաւոր բանակը զինադադարի
ժամանակամիջոցը որոշելու համար:

ԲՈՒՊՈԼԻՍ, 18 մայիսի: Թագաժառանգ իշ-
խանի առողջական դրութիւնը վտանգաւոր է,
բայց առողջանալու յոյս կայ:

ՀՈՍՄ, 18 մայիսի: Ալլիարիտի գործը եր-
րուեալները Ալլիարիտին մեղաւոր ճանաչեցին:
Գաղաքանը դատաւարեց նրան տաժանակիր
աշխատանքներին և ուրիշ պատիւներին ցմահ:

Գաղապարտվածը շատ անպատկառ էր պահուժ
իրան:

ՀՈՍՄ, 18 մայիսի: Մայիսի 16-ին, երեկո-
յան, Պալաչիայում, Լեւիչ նահանգում, մեծ
երկրաշարժ էր, որ նկատելի էր նոյնպէս Բա-
րիում, Տրիօլում, Օպլիդում, Մալթայի-
պում, Բէլգրում, զի-Կալարիպում, Սէսանում,
Մինթում, Պորտիչում, Խիլիում, Հոսմում և
Սիէնում:

ՊԱՐԻՉ, 19 մայիսի: Յունաստանը, ըստ երե-
կոյթին, չի աւարկի խաղաղութեան դաշն կա-
պելու դէմ՝ այնպիսի պայմաններով, որ առա-
ջարկուած է Թիֆլիսի, պետութիւնների համա-
ձայնութեամբ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 16-ին

ԼՕնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	93	ր. 95	կ.
Ներքին վրա 100 մարկ	45	>	90
Պարիզի վրա 100 ֆրանկ	>	>	>
Ռուկի	>	>	>
Մաքսային կուպօններ	149	>	>
Բորսային դիսկօնտ	5 1/2	-70	0
4 1/2 պետական ընտա	99	>	>
Ներքին 5 1/2 առաջին փոխառութ.	285	>	>
>	247	>	>
>	>	>	>
5 1/2 գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	206 1/2	>	>
5 1/2 պետական երկաթուղ. ընտա	>	>	>
4 1/2 ներքին փոխառութեան	98 3/4	>	>
4 1/2 1/2 գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100 1/8	>	>
Ազն. կալ. Պետ. բանկի խաղաղութ.	>	>	>
4 1/2 1/2 վկայակ. փուղ. հող. բանկի	101 3/8	>	>
Փոխ. կիւրաք. ընկեր. մետալ.	>	>	>
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	100 1/2	>	>
Ընկերութեան օրինգայինները.	101 1/4	>	>
Մոսկույի քաղաք. օրինգայինները.	101 1/4	>	>
Օրէշայի	100 1/4	>	>
Քիֆիայի	99 3/8	>	>
Թիֆլիսի կալ. բանկի 6 1/2	101	>	>
5 1/2	99 3/8	>	>
Բուխարայի	101	>	>
5 1/2	99 1/2	>	>

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵՅԱՍ ԱՐՄՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՆՁՆ ԵՄ ԱՌՆՈՒՄ ՀԱՄԵՄՏԱՏԱՐ ԷԺԱՆ
ԳՆՈՎ՝ ուղղել Ֆասալի շտեկատուական ա-
ռանց սիւներ դնելու, կապել երկաթի կա-
պելով երկրաշարժից զոյացած ձեղքեր,
սակեջրել տաճարները խաչեր, գործել զբա-
րէթները վրա, բարձր և երկրաշարժի տեղե-
րում: Ընդունում են ներքին ամենատեսակ
պատուէրներ, ունեն յանձնարարականներ:
Հասցեն՝ ուսուց սեմինարիայի տուն, պոլ-
սեցի Բելլիքեան: (№ 57) 2—5

ԱՆՆԱ ՇԱՂՈՒԲԱԹԵԱՆՑ, ՍԱՐԻԱՄ և ՆԱԶԱՐԷԹ ՏԻԳՐԱՆԵԱՆԵՐԸ, որտի ցաւով յայտ-
նում են ազգականներին և ծանօթներին, առաջինը իր մօր, միւսները՝ իրանց մեծ մօր

ՍՕՖԻԱ ԻՍՏԱՆԿԱԿԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ

(Մ ն հ ա լ Մ է լ ի ք Ա զ ա մ ա լ և ա ն)
մասկան մասին, որ տեղի ունեցաւ մայիսի 19-ին: Յուդարկաւորութիւնը տեղի կունենայ
չորեքշաբթի օրը, մայիսի 21-ին, առաւօտեան ժամը 9 1/2-ին, հանգուցալի բնակարանից
Սաղօպայ փողոց (Սուրակ) տուն Էֆէնդեանցի, № 56, դէպի Մոլոնա ս. Գեորգ եկեղեցին,
այնտեղից խօջիվանք:
Հողեհանգիտը այսօր երեկոյեան ժամը 7-ին:

ԱՏԱՄՆԵՐՈՒԿԱՆ-ԸՆԴՈՒՆԱՐԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մ. Մ. Մ Ա Ր Գ Ս Ր Ե Ն Ն Ց Ց
Հիւանդների ընդունելութիւնը սկսվելու է յունիսի 1-ից: Յանձն է առնում հիւանդ ատամ-
ներ ԲժՇԿԵԼ, ԼՅՆԵԼ, և ՆՈՐ ԱՏԱՄՆԵՐ ՇԻՆԵԼ: (№ 56) 3—10

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւաղնացութիւն ՄԱՐՍԷՅԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունիսի 25/6-ի չորեքշաբթիցի,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսօն և Պոլիս: Մեկնում է Բաթու-
մից՝ չորեքշաբթի, 28 մայիսի (յունիսի 2) ՍՈՐԿԱՍԱԻ չորեքշաբթի, նաւաղն ԳԱՐԻՍ և այդպէս շա-
բուանալաքա, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ: Բա-
թումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոնախմբեր տրվում են սովորականից
Պալկա գն եր 0 վ. Արմաններ և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնները
ստանալու համար թող բարեհաճեն զիմե ընկերութեան գործակալներին:
ԲԱՌՈՒՄՈՒՄ—պ. վիկտոր դ'Արնօն, Նաբեթ-ժայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա-
կեանին, Սիօնի փող. նախկին Արժրուտ. քաղաքապետ: ԲԱՌՈՒՄ—պ. Ս. Կիլարեանին, Կոլլեբեա-
նիկայայ հրատարակ. ՆՕՎՕՐՕՍԻԹՅԱ—պ. Միլիթօր Հեղինարդերին: (№ 16) 20—20